Սրամտություններ

- Ապրում ենք կողք-կողքի, - ասաց գաբրովցին հարևանին՝ մտնելով նրա տուն և հանելով գինու շիշը:

- Արի մի-մի բաժակ խմենք: Վաղը խոստովանության պետք է գնամ, իսկ հիմա քեզ մոտ եմ եկել, որ ներես բոլոր մեղքերս:

Հարևանը, որ նույնպես գաբրովցի էր, շտապեց վրա բերել.

- Ամեն ինչ ներում եմ, ամեն ինչ մոռանում, բացի 100 լևից, որ պարտք ես ինձ:

✷ ✷ ✷

Երկու հարևան ընկերացան, մի էշ գնեցին ու տուն բերեցին: Նրանցից մեկը ասաց մյուսին.

- Էշի ո՞ր կեսն ես ուզում:

- Բայց, չէ՞ որ էշը ընդհանուր է, - զարմացավ մյուսը:

- Իսկ դու ո՞ր կեսն ես ուզում,- ծիծաղեց մյուսը:

- Առաջնամասը գլխի հետ, - առանց տատանվելու վրա բերեց առաջինը:

- Վճռված է, - ասաց ընկերը: Նա քշեց պոչի վրայի ճանճերը և ասաց փայատիրոջը.

- Ես իմ կեսի մասին հոգացի: Հիմա քո հերթն է, գարի կառնես, քո կեսին լավ կկերակրես: Թող կե՛ցցե մեր համագործակցությունը:

✷ ✷ ✷

Մի քահանայի մոտ հյուրեր եկան: Խոսք բացվեց էլեկտրականության մասին:

- Տեր հայր, ինչո՞ւ եք մոմեր վառում: Չէ՞ որ էլեկտրականությունն ավելի էժան է:

- Գիտեմ, որ էժան է, - ասաց քահանան, -իսկ իմ մոմերը ձրի են:

✷ ✷ ✷

Բժիշկը դժգոհ հաճախորդի տված գումարից, հեգնանքով հարցնում է.

- Սա ինձ եք տալիս, թե աղախնուս:

- Երկուսիդ, - պատասխանում է գաբրովցին:

✷ ✷ ✷

Գաբրովցին հյուրին տապակած կարտոֆիլ մատուցեց, ասելով.

- Կե՛ր, եղբայր, մի ամաչիր, իմ սեփականն է:

- Բայց չէ որ դուք բանջարանոց չունեք:

- Ես գերեզմանոցում տեղ եմ գնել, առայժմ այնտեղ կարտոֆիլ եմ ցանում:

✷ ✷ ✷

Գաբրովցու տանը հյուրեր կային: Ջրուցում էին արդեն մի քանի ժամ:

- Հյուրերին որևէ զովացուցիչ բան առաջարկիր, - հիշեցրեց կինը:

- Խնդրեմ, - ասաց ամուսինը և բացեց պատուհանները:

✷ ✷ ✷

Հիվանդ գաբրովցին ընկերոջ հետ գնաց բժշկի մոտ: Դուրս գալուց հետո ընկերը հարցրեց.

- Լսի՛ր, ինչո՞ւ դու ասացիր, որ սրտի խփոց ունես և ստամոքսդ է ցավում:

- Հիմար, սրտի խփոց ունի կինս, իսկ աղջկաս ստամոքսն է ցավում:

- Հետո ի՞նչ:

- Ինչո՞ւ պետք է բժշկին կնոջս ու աղջկաս համար էլ վճարեմ, նրա նշանակած դեղը կխմենք երեքով:

✷ ✷ ✷

Ուսուցիչն աշակերտներին պատմում էր մետաղների հատկությունների մասին:

- Երեխաներ, տեսեք, ես հիմա թթվի մեջ կգցեմ այս ոսկեդրամը, ի՞նչ եք կարծում, այն կլուծվի՞:

- Ո՛չ, - ասացին աշակերտները:

- Ինչո՞ւ:

- Որովհետև եթե լուծվեր, դուք ոչ մի դեպքում ոսկեդրամ չէիք գցի թթվի մեջ:

Հրանտ Սարգսյան

УРОК 18
ԴԱՍ 18

Дательный и винительный падежи

Формы дательного и винительного падежей армянских личных местоимений совпадают.

Заучите эти формы.

I л. ед. ч. ինձ [индз] мне, меня
II л. ед. ч. քեզ [к'эз] тебе, тебя
III л. ед. ч. նրան [ныран] ему, ей, ее, его
I л. мн. ч. մեզ [мэз] нам, нас
II л. мн. ч. ձեզ [дзэз] вам вас
III л. мн. ч. նրանց [ныранц] им, их

Примеры:

Տո՛ւր ինձ: [тур индз] Дай мне!
Նա տեսավ ինձ: [на тэсав индз] Он увидел меня.
Ես տեսա նրանց: [ес тэса ныранц] Я увидел их.
Ես մոտեցա նրանց: [ес мотэца ныранц]
Я подошел к ним.
Քեզ համար թատրոնի տոմս եմ գնել: [к'эз hамар т'атрони томс эм гынэл]
Я для тебя купил билет в театр.

Обратите внимание на форму քեզ համար в последнем предложении. Послелог для всегда употребляется с дат. (вин.) падежом.Ср. также:

ինձ համար для меня
մեզ համար для нас
ձեզ համար для вас
նրանց համար для них

С дат. – вин. падежом употребляются также послелоги հետ с, մոտ у, например:

Նա խոսում է ինձ հետ: Он говорит со мной.
Քո գիրքը ինձ մոտ է: Твоя книга у меня.

Прочитайте:

Ա~խ, ի՛մ հայրենիք...
Իմ ամբողջ կյանքում լեզուդ եմ սերտում
Եվ չեմ սովորել անսխալ խոսել:
Անսխալ խոսել քո մասին, քեզ հետ
Շփոթվում եմ միշտ անանց հուզմունքից...

О моя родина!
Всю свою жизнь язык твой учу.
И не научился без ошибок говорить.
Без ошибок говорить о тебе, с тобой.
Теряюсь я всегда от непреходящего волнения...

Паруйр Севак
(подстрочный перевод)

Исходный падеж

Исходный (отложительный) падеж образуется при помощи окончания –ից, которое прибавляется к форме дательного – винительного падежа:

I л. ед. ч ինձնից, ինձանից [индзниц, индзаниц] от меня
II л. ед. ч. քեզնից, քեզանից [к'эзниц, кэзаниц] от тебя
III л. ед. ч. նրանից [ныраниц] от него (нее)
I л. мн. ч. մեզնից, մեզանից [мэзниц, мэзаниц] от нее
II л. мн. ч. ձեզնից, ձեզանից [дзэзниц, дзэзаниц] от вас
III л. мн. ч. նրանից [ныраниц] от них

Запомните: –ից является окончанием исходного падежа также для существительных, ср. քեզանից от тебя, սեղանից от стола.

Этому падежу в русском языке соответствует форма родительного падежа с предлогами от, из, с, у, в отдельных случаях – и форма творительного падежа, например:

Ես գոհ եմ քեզանից Արամից: [ес гоh эм к'эзниц (арамиц)]
Я доволен тобой (Арамом).
Ի՞նչ ես ուզում ինձանից: [инч эс узум индзниц] Что ты хочешь от меня?
Նրանցից մեկին ճանաչում եմ: [ныранциц мэкин ч'аначум эм] Одного из них я знаю.

Творительный падеж

Творительный падеж по функции в основном совпадает с русским творительным падежом. Он образуется при помощи окончания – ով, которое, как и –ից, прибавляется к форме дательного – винительного падежа:

I л. ед. ч. ինձնով, ինձանով [индзнов, индзанов] мною
II л. ед. ч. քեզնով, քեզանով [к'эзнов, кэзанов] тобой
III л. ед. ч. նրանով [ныранов] им, ею
I л. мн. ч. մեզնով, մեզանով [мэзнов, мэзанов] нами
II л. мн. ч. ձեզնով, ձեզանով [дзэзнов, дзэзанов] вами
III л. мн. ч. նրանցով [ныранцов] ими

Здесь также в местоимениях I и II л. перед окончанием –ով появляется –ն или – ան.

В разговорной речи более употребительны формы с –ն: ինձնից, ինձնով, քեզնից, քեզնով и т.д., например:

Ես հպարտ եմ քեզնով քեզանով: [ес hыпартанум эм к'эзнов (к'эзанов)]
Запомните: – ով является окончанием творительного падежа также у существительных, ср. նրանով им и դանակով ножом.

Местный падеж

Личные местоимения в местном падеже малоупотребительны. Форма местного падежа образуется при помощи окончания –ում, которое, как вы уже знаете, является также показателем местного падежа существительных. Окончание –ում прибавляется к форме дательного – винительного падежа:

I л. ед. ч. ինձնում, ինձանում [индзнум, индзанум] во мне
II л. ед. ч. քեզնում, քեզանում [к'эзнум, к'эзанум] в тебе
III л. ед. ч. նրանում [ныранум] в нем, в ней
I л. мн. ч. մեզնում, մեզանում [мэзнум, мэзанум] в нас
II л. мн. ч. ձեզնում, ձեզանում [дзэзнум, дзэзанум] в вас
III л. мн. ч. նրանցում [ныранцум] в них

Формы первого и второго лица мн. ч. մեզանում, ձեզանում имеют значение в нашей среде, у нас, в вашей среде, у вас, например:

Մեզանում դա ընդունված չէ: [мэзанум да ынтунвац чэ] У нас это не принято.

Սովորեցրե՛ք ձեր մանուկներին բանաստեղծություններ:

Հայոց լեզու

Սիրում եմ քեզ,
Հայոց լեզու,
Մայրիկիս պես
Անուշ ես դու:

Քեզնով եմ ես
Հպարտանում,
Կարդում, գրում,
Արտասանում:

Մեծ եմ

Արդեն մեծ եմ ես, գիտե՞ք,
Էլ ինձ փոքրիկ չկարծեք.
Ոտքիս ծայրին թե կանգնեմ,
Մեծ սեղանին կհասնեմ:

Իմ տիկնիկին

Իմ լավ տիկնիկ, իմ կուկու,
Այդ ինչո՞ւ չես քնում դու:
Գիշերը բուն չի ննջում,
Մթնով որսի է թռչում:
Քնի՛ր, քնի՛ր, իմ կուկո՛ւ,
Դու տիկնիկ ես, ոչ թե բու:

Ջուրը

Ջուրը կյանք է, ջուրը՝ ուժ,
Ջուրը մայր է քաղցրանուշ:
Ով ուզում է մեզ նման
Լինել առողջ ու աշխույժ,
Ամռան շոգին թող գա նա,
Մեզ հետ ջրում լողանա:

Հայոց լեզու

Դու՝ մոր նման
Միշտ տուն կանչող
Մայր հողի պես
Միշտ կանաչող:

Թե կորչեիր
Հանկարծ անհետ,
Ինչպե՞ս խոսեր
Մայրս ինձ հետ:

Օիածան

Մթին ամպերից
Եկավ հորդ անձրև.
Պարզեց երկինքը,
Օագեց ջինջ արև:

Կանաչ ու կարմիր
Կապեց ծիածան.
Ջրի կաթիլներն
Ալ գոհար դարձան:

Հայաստան

Հայաստանը
Իմ անունն է,
Ազգանունն է,
Ինձ ուժ տվող զորությունն է:

Իմ լեզուն է, այբուբենը,
Որ կոչվում է հայրենի տուն:
Եվ ես հիմա իմ տան պատին
Նոր-նոր քարեր պիտի դնեմ,
Որ գնալով հզորանա,
Օլարծակի ու նորանա:

Курс ведет
Армине ОВСЕПЯН

ԻՆՆ ԵՐԱՆԻՆԵՐ

Գ. «Երանի~ հեզերին, քանզի նրանք երկինքը պիտի ժառանգեն» (Մատթ. Ե 5)

Հեզ բառը շատ իմաստներով է գործածվում, օրինակ՝ նշանակում է հանդարտ, անշարժ, լուռ և այլն: Սակայն Աստծո փառքի համար խոսելը, առաքինությունների մեջ փութաջան լինելը, չարի դեմ արիաբար պատերազմելը նույնպես բարի են: Ըստ հայրերի՝ այս երանին ի նկատի ունի այն հեզությունը, որ ընդդեմ բարկության է և սանձահարում է առհասարակ բնական ախտերը: Քանի որ մարդկային բնությունը դյուրագայթ է և մեղսահակ, մշտապես հարկ է առաքինություններով սանձահարել ախտերը և զգուշանալ մեղքի ծառայությունից: Այսինքն՝ քրիստոնյայից պահանջվում է հարատև պայքար մեր բնության մեջ արմատավորված զանազան չար ախտերի, հակումների և սովորությունների դեմ: Ըստ եկեղեցու հայրերի՝ հեզությունը ծնվում է խոնարհությունից, իսկ խոնարհությունը՝ իմաստությունից. նույնպես էլ՝ բարկությունը ծնվում է հպարտությունից, իսկ հպարտությունը՝ տգիտությունից: Հեզության գերագույն օրինակը մեր Տեր Հիսուս Քրիստոսն է, որ ասում է. «Սովորեցե՛ք Ինձանից որովհետև հեզ եմ և խոնարհ սրտով» (Մատթ. ԺԱ 29): Ով ձեռք է բերել հեզություն և սրտի խոնարհություն, նա դարձել է քրիստոսանման և ազատ է մեղքի իշխանությունից. «Հեզաբարո մարդը դադարեցնում է մեղքերը, իսկ բարկասիրտ մարդը խորացնում է դրանք» (Առակ. ԻԹ 22): Հեզաբարո և խաղաղասեր մարդը՝ ամենքի հանդեպ սիրով լցված, առանց խռովության և կեղծիքի, ժառանգում է և՛ զգալի, և՛ իմանալի երկիրը (առաքինությունը), իսկ խռովարարը կզրկվի թե՛ իր հայրերի ժառանգությունից, թե՛ հավիտենական բարիքներից: Ըստ ս. Գրիգոր Լուսավորչի՝ երկիրն այստեղ եկեղեցին է, իսկ եկեղեցու գլուխն Ինքը Քրիստոսն է:

Հեզ և խոնարհ մարդը միայն իր անձնական մեղքերն է քննում և չի դատում մարդկանց իրենց մեղքերի և թուլությունների համար. նա համբերությամբ և ներողամտությամբ է լցված նրանց նկատմամբ. «Մի՛ դատեք, որ Աստծուց չդատվեք, որովհետև ինչ դատաստանով որ դատեք, նրանով եք դատվելու. և ինչ չափով, որ չափում եք, նրանով պիտի չափվի ձեզ համար» (Մատթ. է 1-3):

«Գանձասար» աստվածաբանական կենտրոն